

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին  
№ 0105  
11 JAN 2022  
Կից  Նշում

« 10 » հունվար 2022թ.

No 67 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ «ԹԱԹՔԻՄՖԱՐՄՊՐԵՊԱՐԱՏԻ ԲԸ, 420091  
ԹԱԹԱՐՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶԱՆ, ԲԵԼՈՄՈՐՍԿԱՅԱ Փ. 260»  
ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ԹԱԹՔԻՄՖԱՐՄՊՐԵՊԱՐԱՏԻ ԲԸ, 420091  
ԹԱԹԱՐՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶԱՆ, ԲԵԼՈՄՈՐՍԿԱՅԱ Փ. 260,  
ՌՈՒՍԱՍՏԱՆ») «ԳԼԻՑԻՆ, ԳԼԻՑԻՆ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԵՆԹԱԼԵԶՎԱՅԻՆ և  
ՆԵՐԱՅՏԱՅԻՆ 100ՄԳ; (50/5X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ, (50/2X25/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.12.2021 թվականի N 0103129121 բացասական եզրակացությունը՝ Ռուսաստանի «Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260, Ռուսաստան») «Գլիցին, գլիցին, դեղահատեր ենթալեզվային և ներայտային 100մգ; (50/5x10/) բլիստերում, (50/2x25/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20391 առ 28.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ մասնավորապես կենսահամարժեքության տվյալները չեն ներկայացվել.

Տեսե՛ք. 11.01.22 Ն.Մ.Պ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Ռուսաստանի «Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260, Ռուսաստան») «Գլիցին, գլիցին, դեղահատեր ենթալեզվային և ներայտային 100մգ; (50/5x10/) բլիստերում, (50/2x25/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

10.01.2022

X



ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157